13.09.2021
348-14

Երևանի քաղաքապետ
Հայկ Մարությանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարության,

Երևան քաղաքի Սիլիկյան հին խճուղու բնակելի թաղամասի անմիջական հարևանությամբ գործում է քարի արտադրամաս, որը գործում է համայնքային սեփականություն հանդիսացող հողի վրա՝ անօրինական: Համայնքային հողի նշանակությունը նույնպես փոխված չէ (այն բնակելի է):

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի 2021 թվականի օգոստոսի 4-ի տեղեկություն ստանալու հարցմանն ի պատասխան, Երևանի քաղաքապետարանը օգոստոսի 10-ին ուղարկել է պատասխան գրություն, որում նշել է՝ «Միաժամանակ տեղեկացնում եմ, որ հիշյալ հասցեում գործող քարի արտադրամասի գործունեությունը դադարեցնելու առումով՝ Երևանի քաղաքապետարանը լիազորություն չունի» (գրությունը՝ կից):

Մինչդեռ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետով 7-րդ և 9-րդ ենթակետերի համաձայն՝ ձեր անմիջական իրավասության սահմաններում է ձեռնարկել միջոցառումներ հողամասի ոչ նպատակային օգտագործումը կասեցնելու ուղղությամբ :

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք նշել հստակ ժամկետ, թե երբ է կասեցվելու/դադարեցվելու Սիլիկյան հին խճուղի 60/1 հասցեում համայնքիային հողը զավթած և ապօրինի գործող քարի արտադրամասի գործունեությունը (խոսքը արտադրամասի շինությունը քանդելու և կամ ապամոնտաժելու մասին չէ):

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով:***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,

№ 21/98733 «10» 08 2021թ.

<<ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>-ի
ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
/Ք.Երևան Փավստոս Բուզանդի փողոցի հ.1/3 շենք , 4-րդ հարկ/

Ի պատասխան Ձեր 04.08.2021թ. հ.262430 էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով ներկայացված հարցման (որը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ մուտքագրվել է 04.08.2021թ. հ.21/98733 թվագրմամբ) տեղեկացնում եմ, որ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն, Նորք-Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն վարչական շրջանների բաժնի պետի կողմից Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին հասցեագրված 29.07.2021թ. հ.եա-4631/02 գրությամբ Երևանի քաղաքապետարան է ուղարկվել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի ավագ հարկադիր կատարողի որոշումը՝ պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին, համաձայն որի որոշվել է՝ <<Ի կատարումն ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/5941/05/21 վարչական գործով 28.07.2021 թվականի տրված կատարողական թերթի՝ արգելել Երևանի քաղաքապետարանին Երևան քաղաքի Միլիկյան հին խճուղու հարևանությամբ գտնվող շինության քանդումն և/կամ ապամոնտաժումը>> (պատճենները կցվում են):

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ հիշյալ հասցեում գործող քարի արտադրամասի գործունեությունը դադարեցնելու առումով՝ Երևանի քաղաքապետարանը լիազորություն չունի:

Առդիր 4 թերթ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԴԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ռ.ԴԱՐԲԻՆՅԱՆ**

Կատարող՝ Ա.Սիմոնյան
հեռ.011 514-001(564)